

դրութիւնը , և յետոյ դիմել զէպ ի գիտութիւն այն հարցերով , որ այդ դրութեան պատճառներէն առաջ կու գան» :

(A. Lerch. Ս . Պետրպուրգ 1860.)

Այսպէս կէս դար առաջ , ուսս Բրօֆէսէօրը զրի կ'առնէ անոնց սովորութիւնները , բնակավայրը , աւանդութիւնները , եղած չափով վիճակագրութիւնը , որոնցմէ մենք քաղուածներ առաջ կը բերենք մեր ուսումնասիրութեանց կարգին :

### ՔԻՒՐԳԵՐՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՅԸ

(Պետական կազմութեան ձեւը . իր արժեքը . պատերազմը նկատուած պետութեան մը յասուկ զբաղմունք ու շահ . քաղաքակրթական նախնական շրջաններու խաբեարարութիւնը . եկուրները Քիւրդերու պետական կազմութեան մէջ . անոնց անեցականութեան պատճառները . կիսանկախութեան սխեմը . Հայերու հետ ունեցած շփումը :)

Հնագոյն Մարաց պատմութեան այն մասը որ առաջ պիտի բերենք գիտնական Բ . Պալաթեանի ուսումնասիրութիւններէն , քաղուած Ասորա-Բարեկոնական սեպածեւ արձանագրութիւններէն , կասկած մը չեն թողուր Քիւրդերու անոնց հետ ունեցած մասամբ արենական և մասամբ քաղաքական կապակցութեանը :

Մարերու այս պատմական կտորը ցոյց կուտայ Քիւրդերու բնակավայրը՝ որ կարկի է այժմեայ բացատրութեամբ կոչել Հայրենիք : Ուշագրաւ են Մարերու պետական կազմի ձեւը , քաղաքակրթութեան աստիճանը , պատերազմները , յափշտակութիւնները , տիրող հարկատուութեան սխեմէն , ևն . :

Պատմութիւնը և ստուգարանուած ուսումնասիրութիւնները դեռ ցոյց չեն տուեր որ նախնի Մարերու բնակավայրերու մէջ հիմնուած ըլլայ զի մը Քիւրդերէն զատ . թէև Մարաստանին եղեր են բազմաթիւ տիրապետողներ , բայց երկիրը իսկա-